

ԲԱԲԱԿ ԵՒ ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

(ԷՋ ՄԸ ՄԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՆՆՆ)

(Շար. տե'ս «Բաղմուկ», 1958, թ. 3-5, էջ 72)

3. — ԻՍԱ ՊԻՆ ԵՌԻՍՈՒՖ ՊԻՆ ԻՍԹԻՖԱՆՈՒՍ

Բարակի եւ իր եղբոր Ապտ Ալլահի ձեռքակալութեան եւ ալ-Աֆշինի յանձնումին երրորդ գլխաւոր դերակատարն է այս Իսա պին Եռսուֆ պին Իսթիֆանուս Աղ-ուանից Հայ իշխանը:

Տարբերի մեր վերը թարգմանած պատմութենէն տեսնուի որ երբ Սահլ՝ Բարակը իր բերդը կը հրաւիրէ, Բարակ կը ցանկայ որ իր եղբայրը՝ Ապտ Ալլահը պահուի Իպն Իսթիֆանուսի բերդը, որպէսզի եթէ ինք բռնուի՝ գոնէ եղբայրը ազատի եւ շարունակէ իրենց տունը, կամ թէ փոխաբար՝ եթէ իր եղբայրը նախ բռնուի:

Կաղանկատուացի կը յիշէ Ստեփաննոս գլուխեցեալն Արլասաղ, որ Էաժն գրաքան եւ եհար գրադակացիսն (էջ 376): Ակնարկութիւնը Բաղաց ապստամբութեան մասին է: Աւելի վերը դարձեալ կը վկայէ. «Եւ ի նոյն ամի տէր Ներսէս ի փղիպեան» (սրբազրէ Փղիպեան) սպան զՎարազ Տըր-դատ ի Ստեփաննոսեան, եւ զորդին նորին ի մօրն զոգ գեներն եւ զամենայն ստացուածս նորա յափշտակեցին: Այս Վարազ Տըրդատ « ի Միհրական տոհմէ էր, որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնելով: Սա ութերորդ էր ի Վարազ Գրի-գորէ՝ առաջին իշխանէ Աղուանից » (էջ 375):

Հոս նախ ներկայացնենք Միքիական տոհմը:

Կաղանկատուացի կը պատմէ որ Սա-սանեան Պոսրովու ազգական Միհրան՝ փախստական կ'ըլլայ եւ կ'ապաստանի Գարգման ու հոն ալ կը հաստատուի: Կը

շինէ Միհրական եւ ամրացնելու համար իր իշխանութիւնը՝ բնիկ իշխաններէն 12ը դաւով կը սպաննէ: Միհրան կ'ունենայ որդի մը, Արմայէլ, առ ալ կը ծնի Վարդ, որուն որդին՝ Վարդան: Վարդան իր կարգին դաւով Աղուանից գեղականացի ազգս Հայկազնեայց գեղանշահիկս ճաշի կը հրաւիրէ եւ անոնցմէ 60 հոգի դաւով կը սպաննէ: Այս դաւէն կ'ազատի միայն Արմիրէն Եռանշահիկը, որ Վարդանի փեսայացեալ էր, այսինքն հաւանաբար Վարդան կնութեան առած էր Արմիրէն Եռանշահիկի դուստրը: Վարդանի որդին կ'ըլլայ՝ Վարդ Բ., որուն կը ծնի Վարազման, տիկինն Շուշիկ եւ Վարազ Գրիգոր. վերջինս կ'ըլլայ առաջին իշխանը Աղուանից, հաւանաբար իւրացնելով Արմիրէն Եռանշահիկի իշխանութիւնը: Վարազ Գրիգոր ալ իր կարգին կ'ունենայ չորս որդիներ. Վարազ Փերոժ, Զիւանշիր, Յեղուտ Սոսրով եւ Վարազման Բ. (Կաղանկատուացի, էջ 196-7):

Վարազման Բ. կ'ունենայ որդի մը՝ Վարազ Տըրդատ: Վարազ Տըրդատ իր կարգին կ'ունենայ Ստեփաննոս, որ վաղահասակ կը մեռնի (Կիսորեայ), եւ Վարազման Գ., որ արկածով՝ Կուր գետին մէջ ջրամոյն կ'ըլլայ: Վարազ Տըրդատ կ'ունենայ երրորդ որդի մը՝ Զուանշերիկ (Անդ, էջ 374): Ահա այս մեծ գերդաստանին, Վարազ Գրիգորէ հաշուելով, ութերորդ սերունդէն կ'ըլլայ Վարազ Տըրդատ « որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնելով »: Ներսէս Փղիպեան «սպան Վարազ Տըրդատ ի Ստեփաննոսեան, եւ զորդին նորին ի մօրն զոգ գեներն» (Անդ, էջ 375): Պատմիչը թուականին համար «ի նոյն ամի»

կ'ըսէ, ակնարկելով 822ին կատարուած դէպքերուն: Նոյն այս դէպքին մասին Կաղանկատուացիի շարունակողը քիչ մը աւելի մանրամասնութիւն կու տայ ըսելով. « Զայս Վարազ Տըրդատ եւ զորդի նորա Ստեփաննոս, Ներսէս ի Փիլիպեան՝ աղ-դակիցն նորա սպան ի միում ժամու ի խորածորն՝ որ կոչի Դադոյի վանք: Ապա յայն աղետիցն զառն զգեցեալ զարուծիւն կնոջն սպանելով՝ առեալ զմնացեալ իւր դուստրն Սպրամ գիշերահէն տաժանելի ուղեւորմամբ՝ մտանէ ի բերդն Սաչենոյ » (էջ 388):

Ստեփաննոսեան Վարազ Տըրդատ եւ իր մանկահասակ կամ գոցէ ծծկեր որդին կը սպաննուին իրենց ազգական Ներսէս Փիլիպեանէ: Ոճիրը տեղի կ'ունենայ Դադէի փանքին խոր ձորին մէջ: Վարազ Տըրդատին կինը կը ճողոպրի եւ կ'ապաստանի Սաչենի բերդը՝ իր դստեր հետ, որ յետոյ կ'ամուսնանայ Սահլի որդւոյն՝ Ստրնեքսէի հետ:

Օրրէլեան քիչ մը կը լուսարանէ Վարազ Տըրդատի Ստեփաննոսեան կոչումը, ըսելով. «Ի սոյն ամի եւ Տէր Ներսէս Սիւնի՝ որդի Փիլիպայի, սպանանէ վասն ռիսութեան ինչ զՎարազ-Տըրդատ՝ որդի Ստեփաննոսի՝ Աղվանից իշխանի, եւ զորդին եւս ի գոգ մօրն սատակէ. եւ զամենայն ինչս նորա յաւարի առնու: Այս Վարազ Տըրդատ ի Միհրական տոհմէն էր, որ ունէր զսեպական տէրութիւնն Աղվանից » (էջ 158-9): Միհրական այս Վարազ Տըրդատի հօր Ստեփաննոս կոչուիլը չի համապատասխաներ Կաղանկատուացիի, որ Վարազման Բ. ի որդի կը նշանակէ Վարազ Տըրդատը: Գուցէ Վարազման Բ. ունէր երկրորդ անուն մըն ալ՝ Ստեփաննոս: Աղուանից այս գերդաստանը յաճախ ունէր երկու անուն, ինչպէս Սահակ-Սեւադա, Յովհաննէս-Սենեքերիմ:

Վարազ Տըրդատ Ստեփաննոսեան այսպէս կը յիշուի ունեցած ըլլալ որդի մը՝ Ստեփաննոս, որ մօր գրկին մէջ կը սպաննուի Տէր Ներսէս Փիլիպեանէ, երբ վերջինս ինչ որ զինախնդրութեամբ կը սպան-

նէր նոյն պահուն մանկիկին հայրը՝ Վարազ Տըրդատը: Վարազ Տըրդատի կը յիշուի երկրորդ որդի մը՝ Վարազման Գ., որ Կուր գետին մէջ կը կորսուի: Վերջապէս երրորդ որդի մը՝ Զուանշերիկ: Կը յիշուի նաեւ Սպրամ դուստր մը, որ կ'ամուսնանայ Սահլի Սմբատեանի որդի Ատրնեքսէի հետ: Հուսկ Օրրէլեան կը յիշէ Վարազ Տըրդատի երկրորդ դուստր մը. «Էր դուստր մի Վարազ-Տըրդատայ՝ Աղվանից պահեց իշխանի, որոյ անուն Շահանդուխտ, եւ ունէր պատկեր նոր եւ օտար. եւ զեղ նորա յոյժ չքնաղ եւ զարմացուցիչ տեսողաց. որ եւ ոչ ումեք նիւթեղէն կարծիւր. այլ իւր ի լուսատար օղոյ եւ յանօսը շողից կերպացեալ: Որ եւ խընդրեցին հարս ի տանէ Թորդոմեան: Եւ ել նա յաշխարհէն իւրմէ ի հայրենի տանէ. եւ գնացր ի կնութիւն հայկազուն իշխանացն. եւ մտեալ ի Բաղաց սահմանն՝ երթայր ի ճանապարհ » (էջ 163-4): Շահանդուխտի եւ իր խումբը յարձակման կ'ենթարկուին պարսիկ ասպատակներէ, որոնք զեղուհին առեւանգելու համար դարանակալ կը սպաննին: Շահանդուխտ՝ քաջութեան շնորհիւ կ'ազատի եւ կուսակրօնութեան կը նուիրուի:

Արդ, Արլասաղ Աղուանից իշխանը, որ Բարակին զինակցեցաւ Բաղասական եւ Գեղարքունեաց աւերման եւ կոտորածին, յայտնի չէ թէ Վարազ Տըրդատ Ստեփաննոսեանի զերդաստանին ո'ր ճիւղին կը պատկանէր: Տեսնուի որ Կաղանկատուացիի վկայութեամբ 276 Հայոց կամ Քրիստոսի 827ին տեղի ունեցաւ այս գաւառներուն կոտորածը: Արլասաղ ողջ էր այդ տեսն եւ մինչեւ 830-1 թուականը, երբ երկու ապստամբներ՝ Դաւոյ եւ Շապուհ կ'ապստամբին Բարակի դէմ, որոնց Կաղանկատուացի դաւաճանողք ի սէր եւ ի խաղաղութիւն, կ'անուանէ, սպանին զՍտեփաննոս գլուխեցեալն Արլասաղ իւր գործակից եւ զինակից Բարակին: Հաւանաբար ասկէ ոչ շատ վերջ գալանդուն Արլասաղ կալեալ մերձաւորացն՝ չարաչար կործանեցին: Այսինքն անոնք որ Արլասա-

դը սպաննած էին՝ իրենց կարգին սպան-
նուեցան Աբլասաղի մերձաւորներէն,
Ստեփաննոսեաններէն:

Աբլասաղի մահէն վերջ իր տեղ իշխա-
նութիւնը ձեռք առաւ իր քեռորդին՝ Ե-
սայի անուանեալ Աբու Մուսէ:

Կարելի է խորհիլ որ Վարազ Տրդատի
վերջին եւ ողջ մնացած որդին՝ Զուանչե-
րիկ ունէր նաեւ երկրորդ անուն մը՝ Աբ-
լասաղ, եւ Վարազ Տրդատի սպանութե-
նէն վերջ իր հօր տեղ իշխանութեան գը-
լուիւր անցաւ: Հաւանաբար իր հօր վրէժը
լուծելու համար զինակցեցաւ Բաբակին
եւ մասնակցեցաւ Բաղասականի եւ Գե-
ղարքունիքի ասպատակութեան եւ կոտո-
րածին: Ատոր վրայ Դաւոյ (Դաւիթ) եւ
Շապուհ, որ կրնան Տէր Ներսէս Փիլիպ-
եանի զերդաստանէն ըլլալ, իրենց կարգին
սպաննեցին Բաբակի զինակից՝ Աբլասաղ
Զուանչերիկ, որուն իկ մասնիկը փոքր,
երիտասարդ ենթադրել կու տայ: Կ'երե-
ւայ որ Աբլասաղ յաջորդ կամ ժառանգ
չունեցաւ, որուն տեղ Աբլասաղի յաջոր-
դեց «Յիսայի անուանեալն Աբու Մուսէ»
այր խաղաղութեան, քեռորդի Աբլասա-
ղայ՝ ըմբռնեալ զգաւառան՝ իշխանացաւ
ամենայնի» (Կաղանկատուացի, էջ 376):

Այս Իսա իպն Եուսուֆ իպն Իսթիֆա-
նուն է որ Տաբարի կը յիշէ, որն քով
ուղեց զրկել իր Ապտ Ալլահ եղբայրը՝ Բա-
բակ, երբ վերջինս բռնուեցաւ Սահլէ:
Եսայի Աբու Մուսէի Տաբարիի տուած ա-
նունը ցոյց կու տայ որ Եսայիի հայրը կը
կոչուէր Եուսուֆ-Յուսէփ: Իպն ալ Ատիբ
Եուսուֆի տեղ ունի Եուսա (արդեօք
Յովհաննէս):

Մեր պատմութեան մէջ կը յիշուի Յով-
հաննէս Եոաննահիկ մը (Բարխուտ. Պատ-
մութիւն Աղուանից, Ա. էջ 136, որ զըժ-
բախտաբար ինծի պակսեցաւ), որ մի
ղուցէ կարելի է նոյնացնել Աբու Մուսէի
հօր՝ Եուսասի (Եուսուֆ) հետ: Կան որ
Սահլ Սմբատեանի որդի կը կարծեն զինքը
(Աճառեան, Յովհաննէս 80): Իսկ ուրիշ-
ներ ալ եղբայր Սահլի (Բարխուտ. անդ):
Ատոր համար ապացոյց եւ վկայութիւն կը

պակսի: Անանուն Արար ժամանակադրա-
կան հատակոտոր մը Իսթիֆանուն (Աբու
Մուսէի) քրոջ որդին կը նկատէ Սահլը:
Տարակոյս չկայ որ աղբակահներ էին:

Բար Հերբայուս լոկ Էսթեֆանա կը կո-
չէ զայն, չփոթելով Սահլի հետ: Նոյնը եւ
Միքայէլ Ասորի:

Երբ Սահլ յանձնեց Բաբակը ալ-Աֆշի-
նի՝ Բաբակի եղբայրը Եսայի Ստեփան-
նոսեանի բերդը կը գտնուէր: Ալ-Աֆշին
զայն սպահանջեց եւ Եսայի՝ Ապտ Ալլահը
յանձնեց ալ-Աֆշինի:

Հաւանական է որ Աբլասաղի սպաննու-
թենէն վերջ Աբու Մուսէ հեռու մնաց Բա-
բակի հետ գործակցելէ, ինչպէս Սահլ, եւ
ասիկա չեղբորութիւն մը ստեղծեց, որ ալ-
Աֆշին յարգեց եւ Աբու Մուսէի անպատե-
հութիւն մը չներկայացուց Ապտ Ալլահը
ալ-Աֆշինի յանձնելէ:



Մահմետականացած թուրք մը՝ Բուղա
(Յուլ), որ Տաբարի Բուղա ալ-Կաբիր
(Երէց) կը կոչէ, որ ալ-Աֆշինի հետ Բա-
բակի դէմ մղուած պատերազմներուն մաս-
նակցեցաւ քանիցս անյաջողութեամբ, եւ
հետզհետէ քանի մը խալիֆաներու ծա-
ռայեց: Իր բուն անունը, որ անծանօթ
մնացած է մեր մատենագրութեան մէջ, էր
Բուղա ալ-Կաբիր Աբու Մուսա ալ-Թուր-
քի: Մահման դատապարտուեցաւ 868ին:
Այս Բուղան Հայաստան զրկուեցաւ Հա-
յոց ապստամբութիւնը զսպելու համար
851ին: Բուղա՝ Տարօն, Վասպուրական,
Դուին հետզհետէ նուաճեց եւ անցաւ Սիւ-
նիք, հաւանաբար 853ին, եւ զբաղուեցաւ
քաջ Ծանարաց հետ, որ տեղի չտուին ի-
րեն:

Սակայն այս անյաջողութենէն՝ ան ան-
ցաւ Աղուանից նուաճման, որու մասին
երկար եւ մանրամասն կը խօսի Թովմա
Արծրունի. «Եւ եղեւ մօտ ի կատարումն
հասանել ամին երկրորդի գաւառեան նո-
րա՝ (Բուղայի) - տրուած թուականը մօ-
տաւորապէս 854 - եւ զնաց ի կողմանս

Աղուանից. եւ տիրէր յայնժամ մեծի կող-
մանն Աղուանից Ապուսուսէ ոմն, որում
վերծանութեանն յայտնութիւն՝ երիցու
որդի Բանաչէր» (էջ 289): Ինչո՞ւ երիցու
որդի կը կոչուէր Ապուսուսէ, որ Եսայի
Ստեփաննոսեանն էր, յայտնի է: Կարելի
է խորհիլ որ իր հայրը Եուսուֆ - Եսմուս
(Յովհաննէս Եոաննահիկ) գուցէ քահա-
նայ եղած էր:

Արծրունի կը շարունակէ. «Իսկ իբրեւ
լուաւ (Ապուսուսէ), թէ ահա առեալ
Բուխայ զգօրս իւր գալ հասանել ի վերայ
նորա՝ (Ապուսուսէի) հրաման ետ (Ապու-
սուսէ) բոլոր աշխարհին իւրոյ ելանել ու-
նել զլեռնակողմն, ուչ եղեալ ուժեղու-
թեամբ եւ քաջութեամբ սրտիւ ընդդիմա-
նալ, մանաւանդ ի Ծանարացն զնա (Բու-
ղան) տեսեալ ի պարտութիւն մատնեալ եւ
յաղթահարեալ: Ո՛չ, ասէ, վառագոյն մեք
քան զԾանարսն եղիցուք, զի եւ ամուրս
հօրագոյնս եւ բարձրագոյնս քան զնոսս
ունիմք եւ դիւրափակս՝ առ ի յունել ըզ-
մուտս կրնիցն. միայն միաբանութեամբ
սրտիւ կացցուք ապաւինեալ յօգնականու-
թիւնն Աստուծոյ. եւ քէ մեռանիլ եւս ու-
մեք հասցէ՝ ի պարծանս անձին եւ ազգին
իւրոյ համարեալ է, եւ պսակ մարտիրո-
սական ընկալցի ի Քրիստոսէ. զի ոչ եքէ
ըստ հասարակաց սահմանաւոր մահու է,
այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ եւ ժողո-
վրդեան Աստուծոյ: Զայսոսիկ եւ առա-
ւել քան զայս ասելով՝ զնէր առաջի զօրաց
իւրոց աստուածասէր իշխանն Աղուանից»:

«Իսկ Բուխայի առեալ զբաղմութիւն
զօրացն իւրոց՝ իջանէ Գաղարացւոց, եւ
երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ:
Եւ սկսաւ գոռալ, եւ խորհէր զթոյնս հա-
րութեանն թափել ի վերայ իշխանին Աղ-
ուանից, եւ յղէր առ նա կոչելով ի հնա-
զանդութիւն. այլ նա ոչ տայր տեղի բա-
նից նորա, քանզի քաջագոյնս դիտէր ըզ-
բարս նորա խաբեբայս: Եւ ժողովեալ ըզ-
բնակիչս աշխարհին համօրէն զարս եւ ըզ-
կանայս եւ զայլս ի յերկրէն Աղուանից
բաղմութիւն ուսմիկ շինականաց, եւ լէ-
զէնս զօրականաց զսակաւս ի լեռնն ա-

մուր անուանեալն Քթիչ, ըստ այնմ եւ
համբարս ուժեղաց: Եւ Բուխայի իմացեալ
որպիսի պատրաստութեամբ կազմի իշ-
խանն Աղուանից՝ տարակուսէր ի միտս
իւր. զի եւ զբաղումս պատերազմեալ պէս-
պէս մարտիւք, եւ ոչ ինչ կարացեալ ստնա-
նել անմարտնէն լի մարոցացն եւ քաջու-
թեանց արանցն որ ի նմա՝ ողորական բա-
նիւք կոչէր ի հաւանութիւն» (էջ 289-90):

Հոս Արծրունի կու տայ բանակցու-
թեանց շարունակութիւնը որ մեր նիւթին
համար կարեւորութիւն չի ներկայացնէր
հոս: Վերջապէս «Ապուսուսէ վառեալ եւ
զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւ-
րով՝ խաղաց էջ ի վերայ նոցա եւ եհար
ի հարուածս մեծամեծս, եւ առ աւար բա-
ղում եւ զարձաւ ի տեղի իւր ի բանակ
իւրեանց: Ապա այնուհետեւ ոչ կարաց
կալ համարձակութեամբ ի բացեայ առնել
զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն
զլիսաւոր եւ նստոյց զնա ի կողմանէ հիւ-
սիսի կողմն. եւ ինքն բաղմութեամբ զօ-
րաց նստաւ յարեւելից կուսէ, եւ շինեցին
ապարանս ամուրս եւ պարսպեցին մեծաւ
զգուշութեամբ. կանգնեցին պատնէշ եւ
կուտեցին քարինս եւ կանգնեցին մեքե-
նայս եւ կացին ի պատրաստութեան: Եւ
յետ փոքր ինչ աւուրց հրաման ետ Բու-
խայ ելանել ի պատերազմ. եւ կարգեցին
ճակատս, եւ բոլորեցին ռազմ, եւ գունդս
յրնտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուր-
ջանակի ի ներքս փակեցին զլեռնն եւ զը-
րօշս եւ նշանս բարձրագոյնս լայնատա-
րածս կանգնեցին. կարգեցին ըստ գունդս
գունդս առ Շայր նշանակ մի. եւ զի մի մի
թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուոց
եւ զսպառազէն կազմութեանցն զձիոցն եւ
զհեծելոց նոցա. զիտակ են այդմ արք
քաջք, եւ որ միշտ ի պատերազմունս ըզ-
գեղերումն առնեն՝ զումար արարեալ են,
ամենայն զինուոր ի գանձարանս ի տունս
զանձուց թագաւորին, զոր բարձեալ ուղ-
տիւք կրէին ընդ ինքեանս: Ելին ի պատե-
րազմ եւ պատերազմեցան, ըստ որում
սաստկացաւ պատերազմն: Եւ խուռն յար-
ձակմամբ զիմեցին ի վերայ իւրեանց. եւ

հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս եւ դարձան փախստական ի բանակն իւրեանց եւ մտին յապարանսն զոր չինեալ էին. եւ լեռնային զօրքն Ապումուսէի զհետ մտեալ փախստէիցն՝ իջուցին ի լեռնէ անտի եւ դարձան առնել զխակապուտ, եւ չոգան ի բանակատեղ իւրեանց մեծաւ յաղթութեամբ, ուրախացեալ անտրտամ խնդութեամբ, եւ նստան պահել զպահանութիւն իւրեանց եւ աշխարհակոյտ ամբոխին բնակաց իւրոյ տէրութեանն»:

«Եւ զկնի աշտրիկ, որ է երկրորդ հարուածք ալլազգեացն՝ դարձեալ հրաման ետ ելանել ի պատերազմ, եւ հետամուտ հասեալ առ նոսա. եւ ահա իրրեւ արք Ռ (1000) ի յընտրելոցն Աղուանից պատահեալ նոցա հարին զնոսա եւ ածին փախուտեայ ի բանակն եւ ինքեանք դարձան ողջանդամ, եւ ոչ մի ոք վիրաւորուեցաւ. եւ հասեալ առ զօրավարն իւրեանց մեծաւ յաղթութեամբ եւ բազում աւարաւ»:

«Իսկ զօրավարն Բուխայ կայր ի կոր կործանմանն, ի տարակուսանս ըմբռնեալ փղձկէր ի միտս իւր, ցնորակոծ լինէր, հնարէր ելս իրացն գտանել ի վրանայարկն փակեալ, եւ ոչ առնոյր դուռ եւ դարար: Եւ հատաւ քուն յաչաց նորա, եւ ոչ ոք մտանէր եւ ելանէր առ նա դաւուրս Ժ (10), զի եմուտ ի սենեակ ամօթալի երեսօք. այլ եւ երկիւղ ոչ սակաւ ունէր զնա, զի բազում գունդք սուսերամերկաց շուրջանակի պահէին զնա» (էջ 293-5):

Խալիֆայէն նոր հրաման կու գայ Բուխային՝ անպատճառ նուաճել Ապումուսէն: Բուխայ «Յայնժամ հրաման ետուն ամենայն զօրացն ելանել ի պատերազմ. եւ ահա աղաղակ եւ փողք եւ քնարք եւ ջնարք, եւ վառեալ զինու եւ սրոյ եւ ամենայն պատրաստութեամբ անհուն զօրացրն, մինչ գրեթէ ի հիմանց զլեռնոն տապալել, եւ հհան զգօրսն մինչ ի գլուխ լեռինն, եւ ընդ նոսա նշանս բազումս, իբրեւ Ռ (1000) ընտրելաց քաջ երիւարօք. եւ զըրեթէ ոչ ամենեւին ուրեք երեւեցաւ այնպիսի ահաւոր տեսիլ զօրու եւ սպառազէն

կազմութեան՝ ամենայն թագաւորաց, որ կացեալ էին ընդ ծագս տիեզերաց. զորոյ սաստիկ եւ ահալին որոտումն եւ ճայթումն եւ փայլիւն զինուցն, եւ որ ինչ յայնժամ զարդարեալ եւ զինեալ պատրաստեցան զօրքն Տաճկաց (Արաբացոց): Եւ ելանէին գունդք գունդք շտապով եւ ճեպով մի զմիոյ կնի, եւ ամենայն ոք որ տեսանէր՝ ընդ մեծաւ երկիւղիւ ներքադրեալ լինէր: Եւ նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միոջ տէր Մուշեղ որդի սպարապետին եւ կայր հիացեալ ահեղ եւ մեծ զարմացմամբ» (էջ 296-7):

Ուրեմն Ապումուսէ ունէր որդի մը եւ ան կը կոչուէր տէր Մուշեղ: Արծրունի կ'աւելցնէ որ Մուշեղ «էր վարժեալ Աստուածաշունչ գրաց եւ ընդել եւ ծանօթ էր փարսասանական հրահանգիցն՝ եղ առ յայն ժամու իմացական տեսութիւնն գերգրս՝ որոյ սկիզբն է՝ Անդրադեալ ական սրտի նայեցող անձն իմ ի միւս անդամ դալուստն, Ե (5) տուն ի յուրեքորդ վանգէ» (էջ 297-8):

Բուխայ ահարկու պատրաստութեամբ կը յարձակի Ապումուսէի վրայ: «Եւ եղեւ իրրեւ գումարեցան ի մի վայր ամենայն բազմութիւն զօրացն աւելի քան զՄՌ (200 հազար)աց, եւ կազմեցին ռազմ եւ կարգեցին ճակատ, եւ ետուն ճայն այր առն ակոյտեան ելանել. եւ ահա Ապումուսէ, որ ճանաչէր երիցու որդի՝ հանդէպ նոցա եւ ի պատերազմ եւ հանդիսացաւ ընդդէմ նոցա. եւ եղեւ իրրեւ զբոլոր մի մեծ երկաթի, կամ գլխի աղամանդեայ. եւ խուռն բոլորեալ գունդ կային մածեալ իրրեւ գմի այր: Եւ զօրքն Տաճկաց (Արաբացոց) պնդեցան եւ փակեցին շուրջանակի ի ներքս զգունդն Աղուանից եւ զիմեցին յանդուգն ի վերայ նոցա. եւ նոքա կային անշարժ, եւ ոչ ել այր քան զընկեր յառաջ. եւ մինչ նոքա կարծեցին, թէ ի ձեռն նոցա մատնեցան՝ եւ նոքա կային յաղթու եւ զԱստուած կարգային օղնել նոցա, եւ զիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեսանանման խաչին, եւ բախեցին զճակատն եւ պատուեցին զուղմն

եւ դարձուցին ընդ դառ ի վայրն եւ իջուցին ի լեռնէ անտի, եւ հարին ի հարուածս մեծամեծս որպէս յարդ ի հողմոյ վարեալ, կամ ծուխ վատնեալ ի մրրկէ՝ այնպէս կորեան զնացին յերեսաց զօրացն Աղուանից: Եւ դարձան կուտեցին աւար, որոց ոչ զոյր թիւ» (էջ 298-9):

Ապումուսէ դարձեալ յաղթական կ'ըլլայ: Արծրունիի պատերազմի շարքաւորման այս նկարագրութիւնը մեծարժէք է հին հայ ռազմավարութեան համար: Ապումուսէ իր զինուորները քառաթեւ խաչի մը նման դասաւորուած, որով կրնար պաշտպանել բոլոր իր զինուորներուն թիւկունքը, կը միւրճուէր արաբացոց բանակին մէջ եւ իրենց անդիմադրելի թափով եւ անխոցելի շարուածքով Բուխայի ուժերը պարտութեան կը մատնէր:

Պատերազմը երկար կը շարունակուի: «Յերկարեցաւ գործ պատերազմաց սոցա իրրեւ մօտ ի լնուլ ամի միոյ. եւ ոչ ի միում ճակատու դարձոյց Ապումուսէ զերեսս իւր յերեսաց Բուխայի. եւ որպէս պատմի՝ եղեւ թիւ պատերազմաց նոցա ԻԸ (28) անգամ, եւ հարան զօրքն արքունի յայսքան հանդէսս եւ ի կռիւ» (էջ 299):

Այսպէս տարի մը ամբողջ քսանեւեթ պատերազմներով Ապումուսէ մարտնչեցաւ Բուխայի դէմ: «Յայնժամ իրրեւ զիտացին երկուքին կողմանքն, եթէ ոչ զոյ գտանել զելս իրացն եւ տալ խաղաղութիւն՝ ապա հաճեցան եւ հաւանեցան գրել առ թագաւորն (Խալիֆան). զի ասաց զօրավարն Աղուանից, եթէ մի կարծիցէ որ դիս ապստամբ գոլ ի թագաւորէն (Խալիֆայէն) եւ վասն այնր հարկանել զգօրսդ Ասորեստանի. այլ կուտեաց եղ ի վերայ Բուխայի զապստամբութեան վնասն եւ զհարուածս զօրացն, զոր գրեաց իսկ եւ ծանոցար արքայի (Խալիֆային). իսկ եթէ եկեացէ առ իս կիր յարքունուստ, կնքեալ մատանեալ արքայի, եւ իցէ գրեալ ի նմա հրաման՝ գալ ինձ առ քեզ կամ երթալ յարքունիսն՝ ոչ ելից արտաքոյ հրամանացն նորա: Բայց եթէ այդ այդպէս ոչ եղիցի, որպէս ասացի՝ աւելի եւս տեսցես

քան զոր տեսեր, սուր եւ պատերազմ»:

«Ապա երկուքին նոքա զեսպանս արձակեցին առ թագաւորն ի հաւատարիմ արանց... եւ գրեցին եւ ծանուցին արքայի՝ զոր ինչ գործեցին եւ որպէս հարան զօրքն արքունի: Նստան երկուքին կողմանքն պահել զպահանութիւն իւրեանց մեծաւ ըզգուշութեամբ, եւ ետուն անսալ միմեանց՝ ոչ ելանել ի պատերազմ, մինչեւ եկեացեն հրեշտակքն յարքայէ (Խալիֆայէ), զոր առաքեցին: Բայց տուաւ յաղթութիւնն այն մեծ ի ձեռն զօրավարին Ապումուսէի...»:

«Եւ մինչ նոքա կային մնային հրաման ինչ ընդունել յարքունուստ՝ դարձան հրեշտակքն եւ եկին փութանակի, եւ բերին թուղթ յարքայէ առ Ապումուսէ՝ գալ ի հնազանդութիւն նոցա եւ երթալ առ Բուխայ. եւ էր գրեալ ի նմա թողութիւն վնասուցն եւ հարուածոցն զօրացն եւ բազում աւարացն, եւ երդումն ի հաստատութիւն ասացելոցն, եւ պարգեւս ի պատուական եւ մեծագին հանդերձից, եւ սաղաւարտ ծաղկեայ եւ սուսեր. միայն զի եկեացէ ի բան արքունի եւ մի ելցէ արտաքոյ կամաց թագաւորին (Խալիֆային). եւ գրեալ էր առ Բուխայ, զի մի ինչ հարիս խորհիցի կամ գործիցէ առնն այնմիկ, այլ տացէ տանել զնա առ թագաւորն մեծաւ պատուով եւ զգուշութեամբ»:

«Իսկ իրրեւ ընթերցաւ զօրավարն Աղուանից (Ապումուսէ) զթուղթ թագաւորին՝ փութացաւ էջ ի լեռնէ անտի եւ եկն եկաց առաջի Բուխայի. եւ մինչեւ հասեալ առ զօրավարն՝ հհան ընդ առաջ նորա գունդս գունդս վառեալ զինու եւ ընտրեալ երիւարօք, եւ ետ տանել ընդ առաջ նորա նժոյգս մեծազարդս եւ երեւելիս, եւ երկեցիկս եւ գովասացս եւ բազում զործիս երաժշտականս առաջի եւ զկնի՝ մինչեւ եմուտ ի բանակ նոցա: Եւ ոչինչ ամենեւին զչարացաւ ընդ նմա Բուխայ եւ ոչ յիշեաց զգործսն զոր գործեաց, եւ ոչ տրտմեցոյց զերեսս իւր. այլ ընկալաւ զնա սիրով խաղաղութեան եւ մեծաշուք պատուով եւ պարգեւօք ըստ հրամանի թագա-

ւորին: Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ ետ տանել զնա առ թաղաւորն, եւ ընդ նրմա դունդա զինուորաց վառելոց եւ ընտիր այրուծիոց: Եւ երթայր աներկիւղ համարձակութեամբ, քաջալերեալ ի միտս եւ ի խորհուրդս իւր ըստ պնդութեան արութեան իւրոյ քաջ նահատակն Ապուսուսէ» (էջ 300-301):

Իսկ Մասկաւայ կը վկայէ այս մասին թէ 238 թուին՝ Բուղան «յաղթեց... (Թիֆլիսի)»: Դորանից յետոյ Բուղան յարձակեցաւ Իսայ Իսաուրիի՝ Ստեփաննոսի քրոջ որդու վերայ եւ ճակատեցաւ նորա հետ Փայտակարան քաղաքում. Իսայ ամբարցաւ Կրիշ ամրոցում, Բուղան զբաւեց բերդը, բռնեց նորան եւ տարաւ՝ նորա որդու եւ Սմբատ որդի Աշոտի՝ Աղուանից իշխանի, եւս Ատրնեբսէ՝ որդի Իսահակի հետ միասին»⁽¹⁷⁾: Իսկ Մասկաւայի վկայութեան համաձայն՝ Աղուանից արշաւանքը տեղի կ'ունենայ 238 հիճրէթի կամ մեր 852 թուականէն վերջ: Արարացի ժամանակագիրը Քթիշ լեռն ունի իւր Կթիշ ամրոց: Սակայն սխալ է թէ Բուղան գրաւեց բերդը, բռնեց նորան, այսինքն Ապուսուսէն: Արծրունիի մօտ մանրամասնութեամբ գրուած տեսանք որ Ապուսուսէ չպարտուեցաւ Բուղայէն, եւ խաղաղութեամբ միայն կարելի եղաւ զայն տանիլ Պաղտատի խալիֆային դուռը: Իսկ Մասկաւայի յիշած Ատրնեբսէ՝ Սահլի որդին էր, որուն Իսահակ կոչումը կու տայ արաբ պատմիչը եւ Սմբատ որդի Աշոտի Աղուանից իշխան կը կոչէ: Այս վկայութիւնն է որ սխալ առաջնորդած է Բար Հեբրայուսը, որ, ինչպէս տեսանք Սահլի կենսագրութեան ընթացքին, Մահադի-Բարակը բռնել կու տայ Իսահակ իպն Ա(2)ուսի:

Յովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի կը գրէ, որ «Իշխանն Աղուանից Եսայի (Ապուսուսէ) նենգապատիր լեալ

առ ի նմանէ (Բուղայէ), ըմբռնի ի ձեռս նորա հանդերձ համադրօք իւրովը. ընդ նմին եւս այլ տեսրք եւ իշխանք աշխարհին Աղուանից կալեալ կապեցան ընդ ձեռամբ նորա, ոչ սակաւ ինչ արեան ճապողիս հեղեալ եւս՝ յայնմ աշխարհին»⁽¹⁸⁾: Կը հակասէ կաթողիկոսը Արծրունիի տրւած մանրամասն վկայութեան: Արծրունին է որ կ'ընդունիմ: Ասողիկ ալ գրեթէ նոյն տպաւորութիւնը կ'ունի տալ հակիրճ տողերով ըսելով: Բուղայ «կալաւ... եւ իշխանն իշխանն Ատրնեբսէ, եւ զԵսայի Աղուանից իշխանն...: Չսոսա զամենեւեան եւ զայլս բազումս եւս երկաթի կապանօք խաղացոյց ի Սամարայ. եւ դերեաց զաշխարհս ամենայն»⁽¹⁹⁾: Գոնէ Ապուսուսէ Եսայիի համար ճիշտ չէ երկաթի կապանօք տարուիլը:

Գերեալ Հայ իշխաններուն հաւատարացութիւն կ'առաջարկուի: Նեղութեանց կ'ենթարկուին: Սակայն վերջապէս «Իշխանքն Հայոց, որք դերեցան ի Բուղայէ՝ յետ ամաց ինչ դարձան յիւրաքանչիւր աշխարհս իւր, միայն սպարապետն Սմբատ եւ Ստեփաննոս Կոնն, որք վասն Քրիստոսի խոստովանութեանն կատարեցան ի Սամարայ»⁽²⁰⁾:

Յովհաննէս կաթողիկոս կը մանրամասնէ որ կալանաւորեալները խալիֆային արքունիքը տարուելէ վերջ կը բանտարկուին: «Իսկ ապա յետ ոչ բազում ինչ աւուրց հարցափորձ ի վերայ հասարակաց կապելոցն տերանց եւ իշխանացն Հայոց եւ Աղուանից անէին, զի կամ դարձցին յանօրէն օրէնս նոցա, ուրացեալք զՔրիստոս աստուածաշնորհութիւնն, եւ այնպէս բազում պարզեւս եւ պատիւս ի նոցանէ առնուցուն, եւ յուղարկեցին ի հայրենի աշխարհն եւ ի տունս իւրեանց. եւ կամ սաստիկ խոշտանդանօք եւ չարչարանօք եւ անհնարին մահու հատանիցեն զյոյս կենաց նոցա: Եւ վասն զի այսպէս

զրոհմունս կատանաց ի վերայ նոցա սաստիկ զարհուրամբք օր ըստ օրէ զարթուցանէին, ժամանակ ինչ յերկարեալ զնեղութիւն անձկութեանն, ոմանք ի նոցանէ հաւանեալք բանից արքունի, դարձան... յաստուածածանօթութիւն նոցա, եւ ոմանք թէպէտ եւ ոչ առժամայն կրեցին թլիստութիւն, սակայն յանձին կալեալք՝ զի եւ նոքա եւս ի ժամ զիպող կատարեալ ընուցուն զկամս ամիրապետին» (էջ 163-164): Բացի Սմբատ սպարապետէ եւ Ստեփաննոս Կոննի նահատակութենէն, կը գրէ Յովհաննէս կաթողիկոս, «Բայց այլոց իշխանացն թուի ինձ եւ ոչ մի ինչ մնացեալ՝ որք ոչ եղեն հետեալք յաստուածակողմանն, կամ ոչ չեղեալք յանօրէն օրէնս...» (էջ 165): Վկայութեան համաձայն առ հասարակ բոլորն ալ կ'ընդունին խալիֆային, թէեւ ժամանակաւորապէս: Յովհաննէս կաթողիկոս կը շարունակէ. «Բայց իշխանք եւ նախարարք Հայոց, որք ըմբռնեալք դերեցան ի Բուղայէ, զայսու ժամանակաւ մի ըստ միով է ի կարգ անկեալ՝ չունէին յաշխարհ տէրութեան իւրեանց, եւ ի սեպհականութիւնս եւ ի տունս: Եւ ապա մերկացեալ յանցանաց իւրեանց զաւամայ ուսումնս... օրինացն Մահմէտի, զքրիստոսաւանդ օրէնս հայրենիս առ հասարակ բարձրացուցեալ բերէին յանձինս իւրեանց ոչ ի ծածուկ երկիւղիւ ինչ, այլ իւրեւ ի վերայ բարձր տանեաց քարոզէին զՔրիստոսի աստուածաշնորհութիւնն: Ընդ որս հաճեալ Տէրն, բնակեցոյց յուսով զնոսա. յորմէ եւ օրհնութեամբ օրհնեցան» (էջ 170-171):

Յակնէ յանուանէ չի յիշուի Ապուս-

ուսէի վերադարձը, սակայն տարակոյս չկայ որ Ատրնեբսէի հետ վերադարձաւ նաեւ Ապուսուսէ: Ըստ վկայութեան պէտք է ընդունիլ որ երկուքն ալ առ երեսանց ընդունեցին մահմետականութիւնը, որպէս զի կարենան հայրենիք վերադառնալ: Անգամ մը որ իրենց Երկիրը դարձան, դարձեալ ըստ վկայութեան, կը թողուն իրենց երեսանց խալիֆային եւ վերստին կը դառնան քրիստոնէութիւն:

Ապուսուսէ ողջ էր 906ին, երբ Տաթեւայ վանքին սահմաններուն վճիռը կը ստորագրէր, ըսելով. «Մենք Գրիգոր եւ Եսայի եւ Ատրնեբսէ՝ Աղվանից իշխանք, վկայ եմք այսմ վճռի» (Օրբէլեան, էջ 234):

Ասկէ վերջ որեւէ ուրիշ տեղեկութիւն չենք գտներ Ապուսուսէի եւ նոյնիսկ իր Մուշեղ որդւոյն մասին:

Յայտնի է թէ երբ կամ ինչպէս մեռաւ այս քաջամարտիկ Հայ իշխանն Աղուանից: Արծրունի զայն կը կոչէր Եսայի Ապուսուսէ, որ զշատ պատերազմունսն եւ հար: (էջ 310): Անտարակոյս ակնարկելով Բուղայի դէմ իր յաղթական մարտընչումներուն:

(Վ ե ր ջ)

Յ. ՔԻԻՐՏԵԱՆ

Յ. Գ. – Աւելորդ նկատեցինք ընել բազմաթիւ ճշգրտմաներ զանազան ուսումնասիրութեանց մէջ՝ ուսումնասիրութեանս մէջ յիշուած զանազան անուններու վերաբերմամբ: Եղած են սխալ նոյնացումներ, կամ նոյն անձը քանի մը անձեր նկատուած են:

(17) Արարացի մատենագիրներ Հայաստանի մասին: Բաղրատ խալիֆանց, էջ 78:

(18) 1867, էջ 162:

(19) 1885, էջ 107:

(20) Անդ, էջ 110: